«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ <<ՄԱՅՐԵՆԻ>>-Ի ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ՀԵՂԻՆԱԿ	ՍՈՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<<ԵՐԱԶԳԱՎՈՐՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ……4

3. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ…….13

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……24

5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների խոսքի զարգացման միջոցների և ձևերի համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում մայրենիի դասերին իրականացվող այն աշխատանքները, որոնց հիմնական նպատակը բառապաշարի հարստացումն է, արդյունքում՝ գեղեցիկ խոսք կառուցելու կարողության ձևավորումը: Այդ գործընթացում առանձնահատուկ տեղ են գրավում բառային աշխատանքները, ինչը ենթադրում է բառիմաստների բացատրություն, բառերի հոմանիշների և հականիշների տարբերակում, բառակապակցությունների կազմում, սովորական բառակապակցությունների և դարձվածքների տարբերակում և խոսքում դրանց կիրառումն այլն: Այսպիսի առաջադրանքներ նախատեսված են մայրենիի դասագրքերում:

Դարձվածքների մեծ մասը դասագրքի էջերում սովորաբար տրված է լինում նկարներով և կապակցված խոսքում:

Մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է սովորողների բառապաշարը դարձվածքներով հարստացնելու անհրաժեշտությամբ և բնագրի շուրջ աշխատելու ընթացքում այդ խնդրի իրականացման մեթոդական աշխատանքի անկատարությամբ:

Մեր հետազոտության նպատակն է մշակել բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում դարձվածքները սովորական բառակապակցությունից տարբերակելուն և խոսքում դրանք կիրառելու կարողություն ձևավորելուն նպաստող առաջադրանքներ:

Մեր նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել թեմային առնչվող գրականություն, վերլուծել 1-6-րդ դասարանների առարկայական չափորոշիչը:
2. Պլանավորել և իրականացնել մայրենիի դասեր՝ կարևորելով դարձվածքների ուսուցման գործընթացը:
3. Մշակել դարձվածքների ուսումնասիրմանը միտված օգտակար նյութեր:

Հետազոտության նորույթը:

Մշակել բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում հայերենի դարձվածքների յուրացմանը և բառապաշարի հարստացմանը նպաստող մի շարք առաջադրանքներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դարձվածքը որպես բառակապակցություն, նրա տեսակները:

Ինչպես հայտնի է, բառագիտության մեջ բառի համար իբրև բնորոշ հատկանիշներնշվումեն՝ բառականիմաստը, շեշտը, և առանձին գործածությունը: Բառն օժտված է ևս մեկ, խիստ էական հատկությամբ՝ կապակցունակությամբ, այսինքն՝ իր նմանների հետ կապակցության մեջ մտնելու կարողությամբ, առանց որի հնարավոր չէր լինի նրանից խոսք կազմել, ուստի և լեզվի բուն իսկ հաղորդակցական դերն իրականացնել: Բառն, իր նմանների հետ քերականորեն կապակցվելով, բառակապակցություններ է կազմում:[1]

Առարկային դրան բնորոշ հատկանիշի անվանումների համատեղ գործածությունը բառակապակցությունէ:

Ըստ Ս. Աբրահամյանի՝ բառակապակցությունը երկու կամ ավելի լիիմաստ, ստորադասական հարաբերություն արտահայտող, նախադասության մեջ մեկ անդամի դեր կատարող կամ առանձին հանդես եկող, անվանողական արժեք ունեցող բառախումբ է:[2]

Տարրականդ ասարաններում բառակապակցություն հասկացությանը աշակերտները ծանոթանում են երկրորդ դասարանում՝ չնայած իրենց խոսքում բառակապացկություններ գործածում են դեռևս նախադպրոցական տարիքից, իսկ կազմում են գրաճանաչության շրջանում:

Բառակապակցություններ կառուցելու կարողության ձևավորման և ամրապնդման համար տրվում են նմանատիպ առաջադրանքներ.

---

[1]ԲեղիրյանՊ.Ս.,Ակնարկներժամանակակիցհայերենիդարձվածաբանության,2007,էջ4-5:

[2]ԱբրահամյանՍ.Գ.,Ժամանակակիցգրականհայերեն,1981,էջ275:



Նկար1. Նկար 2.

Բառակապակցությունները դասակարգվում են ըստ կազմության, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության և ըստ բաղադրիչների կապակցվածության աստիճանի:

1. Ըստ կազմության բառակապակցությունները լինում են երկանդամ և բազմանդամ: Երկանդամները կազմված են լինում երկու լիիմաստ բառերից, որոնցից մեկը գերադասէ, մյուսը՝ նրա լրացումը: Բազմանդամ բառակապակցությունները, որոնք ունեն երեք և ավելի բաղադրիչներ, մեծ մասամբ երկբաղադրիչ բառակապակցությունների ընդլայնման արդյունք են:

2. Ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության: Ըստ այնհատկանիշի, թե տվյալ բառակապակցության գերադաս անդամը՝ լրացյալը, ինչ խոսքի մասէ, բառակապակցությունները լինում են գոյականական, ածականական, բայական, թվականական, մակբայական, դերանվանական:

3. Ըստ բառակապակցության բաղադրիչների կապակցության սերտության աստիճանի բառակապակցությունները լինում են ազատ և կայուն:

Ազատ են այն բառակապակցությունները, որոնց բաղադրիչները կարելի է հեշտությամբ իրարից անջատել ու գործածել այլ բաղադրիչների հետ, այսինքն՝դրանք պատրաստի կաղապարներ չեն, կազմվում են խոսողության ընթացքում: Այսպես օրինակ՝քաղցր հայացք,բառակապակցության բաղադրիչները տարրալուծելի են. դրանց ստորադաս անդամները՝ լրացումները, կարող են այլ գերադաս անդամների հետ գործածվել՝ թթու հայացք:

Կայուն են այն բառակապակցությունները, որոնք կազմված են մշտապես իրար հետ գործածվող բաղադրիչներով և մեկ իմաստ են արտահայտում, սրանք խոսելու ընթացքում չեն կազմվում, դրանց համար լեզվում ստեղծվել են պատրաստի կաղապարներ, որոնք տարրալուծելիս,ամբողջական կառույցը կորցնում է իր

իմաստը, քանդվում են կառույցները: Օրինակ՝ ծծմբական թթու, Ազգային ժողով, ջրից չոր դուրս գալ, աքիլլեսյան գարշապար, կրակե շապիկ[3]:

Այլ կերպ ասած՝ազատ բառակապակցությունը խոսողն է տվյալ պահին կառուցում, իսկ կայուն բառակապակցությունը խոսողը այդ պահին չի ստեղծում, այլ իր բառապաշարից գտնում է և խոսքի մեջ պատրաստի ներմուծում (անշուշտ անհրաժեշտ փոփոխությունների ենթարկելով):

Բառակապակցության երկու տեսակներն իրարից էապես տարբերվում են.

- Ազատ բառակապակցությունները շարահյուսական միավորներ են, շարահյուսության ուսումնասիրության նյութը, կայուն բառակապակցությունները՝ դարձվածային միավորներ, որոնց քննությամ բդարձվածաբանությունն է զբաղվում:
- Ազատ բառակապակցությունները, որպես կանոն, երկանդամություններ(բինոմներ) են. Կայուն բառակապակցությունների մեջ էլ շատ են երկանդամություններ կազմողները, բայցևփոքրաթիվ չեն բազմաբաղադրիչ ամբողջությունները:
- Ազատ բառակապակցությունները շարահյուսորեն ընդմիջարկելի են, կայուն բառակապակցությունները՝գերազանցապես ոչ: Սա նշանակում է, որ նախադասության մեջ ազատ բառակապակցությունների անմիջական կազմիչների հեռակա կապը համեմատաբար հեշտ է ընկալվում: Մինչդեռ կայուն բառակապակցությունների բաղադրիչների իրարից հեռանալու դեպքում այդ կապը կարող է չընկալվել, որ մեծ մասամբ դրանց քայքայմանն է հասցնում:
- Շարահյուսական մակարդակում ազատ բառակապակցությունները տարանջատ լեզվական նշաններ են, կայուն բառակապակցությունները՝ ոչ տարանջատ. սրանք հետազոտական-ստուգաբանական տեսակետից նայելիս են միայն շարահյուսորեն տարրալուծելի: Ձեռքերը լվանում է կապակցությունն ուղիղ՝ֆիզիկական իմաստով գործածելիս ազատ է, և մենք այդ երկու բաղադրիչներն առանձին-առանձին ենք ընկալում: Սակայն նույնկապակցությունը, փոխաբերական առումով, կայուն է, նշանակում է

[3]ՍուքիասյանԱ.Մ.,Ժամանակակից հայոցլեզու,1999,էջ295-296

<<պատասխանատվությունն իր վրայից գցում է>>, և այդ եպքում արդեն բաղադրիչներն իմաստով ձուլված են:

➢ Խոսքի կազմում ազատ բառակապակցությունները, եթե ենթակա/ստորոգյալ չեն, գերազանցապես բաց միավոր-նշաններ են, այսինքն՝ ավարտուն չեն: Կայուն բառակապակցությունները շատ և շատ դեպքերում փակ միավոր-նշաններ են, կարող են ամբողջական մտքեր արտահայտել:

Ըստ Պ. Բեդիրյանի հայերենի լեզվական նյութը կայուն բառակապակցությունները հետևյալ 4 տեսակների մեջ բաժանելու հնարավորություն և հիմք է տալիս. Բաղադրյալ անվանումներ, դարձվածային արտահայտություններ, ոչ փոխաբերական հարադրական բայեր, դարձվածքներ(իդիոմ)[4]:

Ըստ Ս.Աբրահամյանի՝կայուն բառակապակցությունները բաժանվում են երկու խմբի՝ ոչ վերաիմաստավորված և վերաիմաստավորված. վերաիմաստավորված ասելով պետք է հասկանալ միայն դարձվածքները(դարձվածային միավորներ)[5]:

Ոչ վերաիմաստավորված բառակապակցություններում ընդհանուր իմաստի փոխաբերացում չկա, կապակցության յուրաքանչյուր անդամ գործածվում է իր բուն իմաստով:

Դարձվածաբանությունը լեզվի այն բաժինն է, որն ուսումնասիրում է դարձվածքները, լեզվի դարձվածքների հարստությունը, դարձվածային համակարգը ժամանակակից վիճակում և պատմական զարգացման մեջ: Դարձվածաբանությունը, մյուս կողմից, լեզվում առկա դարձվածքների ամբողջությունն է:

Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանվում է դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն, հատուկ ոճ, որոշ դեպքերում նաև իդիոմ, իդիոմային արտահայտություն: Արևմտահայ

---

[4]Բեդիրյան Պ. Ս., Ակնարկներ ժամանակակից հայերենիդարձվածաբանության,Եր., Ասողիկ, 2007, 128 էջ:

[5]ԱբրահամյանՍ.Գ.,Ժամանակակիցգրականհայերեն,1981,էջ277:

գրական լեզվում իդիոմի փոխարեն շրջանառության մեջ է դրված հատկաբանություն բառը:

Դարձվածքների՝ որպես լեզվի ինքնուրույն իմաստային միավորների ուսումնասիրությունը հայ լեզվաբանության մեջ ուշադրության արժանացել է 30-ական թվականներից սկսած՝ Մ. Աբեղյանի կողմից:

Լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա դարձվածքների վերաբերյալ: Որոշ մասնագետներ դարձվածբանության մեջ ընդգրկում են բոլոր կայուն կապակցությունները, ուրիշները սահմանափակվում են բառակապակցությունների որոշակի խմբով:

Դարձվածաբանության ավելի լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, աֆորիզմները, թևավոր խոսքերը, ոմանք անգամ՝ բոլոր հարադրությունները, բարդ հարադրական շաղկապները, բառակազմական տերմինները, և այլն, մյուսները՝ դարձվածաբանության ավելի նեղ ըմբռնման կողմնակիցները, հրաժարվում են վերոհիշյալից և հաճախ դարձվածքներ են համարում միայն իդիոմային արտահայտությունները(իդիոմները):

Դարձվածքը կառուցվածով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիս իկապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստ միավոր:

Դարձվածքի մեջ առաջին հերթին առկա են փոխաբերականությունն ու պատկերավորությունը: Որպես լեզվի իմաստային ինքնուրույն միավոր՝ դարձվածքը օժտված է բառային բոլոր հատկանիշներով՝ բառային իմաստով, քերականական ձևավորվածությամբ ու կարգերով: Դարձվածքը՝ որպես խոսքում վերարտադրվող պատրաստի միավոր, բառերի վերաիմաստավորված կայուն կապակցություն է:

Դարձվածքների զգալի մասը հարադրական բարդություններին նույնանում է նրանով, որ դարձվածքը հիմնականում նույնպես ունի մեկ բառի արժեք, կազմված է մեկից ավելի բաղադրիչ բառերից, որոնք պահպանում են իրենց բառային շեշտը: Տարբերությունն այն է, սակայն, որ դարձվածքը ամբողջությամբ փոխաբերական իմաստ ունի, պատկերավոր արտահայտություն է, նրա դարձվածքային իմաստը չի

բխում դարձվածքը կազմող բառերի բառային առանձին իմաստներից[6]:

Ներկայացնենք դարձվածքների օրինակներ՝ տարրական դասարանների մայրենիի դասագրքերից.

Նկար 3.

Նկար 4.

Նկար5.

Դարձվածքի ընդհանուր իմաստի և դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի միջև գոյություն ունեցող հարաբերության տեսակետից հայերեն դարձվածքները բաժանվում են չորս խմբի՝ դարձվածքային սերտաճում, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն և դարձվածքային արտահայտություն:

Դարձվածքային սերտաճում: Այս խմբի մեջ են դասվում այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք իմաստային տեսակետից բառային անբաժանելի, անքակտ այնպիսի կապակցություններ են, որոնց մեջ բառերը, ամբողջապես կորցնելով հանրորեն ընդունված իրենց բառային իմաստները և տվյալ կառուցվածքում վերաիմաստավորվելով, դառնում են դարձվածքի տակ ընդհանուր, ամբողջական իմաստի բաղադրատարր՝ չցուցաբերելով իրենց բառային և իմաստային ինքնուրույնությունը. ինչպես, օրինակ՝ աչքից գցել-ատել, գլուխ գալ-հաջողվել, գլուխը աղալ-սպանել:

Դարձվածքային սերտաճման հիմնական հատկանիշը նրա բառային անբաժանելիությունն է, բաղադրիչների իմաստային բացարձակ սերտաճումը: Նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական

[6] ՍուքիասյանԱ.Մ.,Ժամանակակից հայոցլեզու,1999,էջ295-296:

անբաժանելի անդամ:

Դարձվածքային միասնություն: Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտաճումների նման իմաստաբանորեն նույնպես անբաժան են և ամբողջական, բայց ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով: Այս դեպքում դարձվածքի իմաստը բխում էառանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, նրանց իմաստների միությունից, բայց այն տարբերությամբ, որ բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, դարձվածքը ամբողջապես ստանում է վերաիմաստավորված՝ընդհանրացված բովանդակություն: Դարձվածքային միասնությունները հիմնականում պատկերավորարտահայտություններ են, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Դրանց մեջպ ատկերավորությունն առաջանում է դարձվածքը կազմող առանձին բառերը(բաղադրիչները) փոխաբերական իմաստով գործածվելու հետևանքով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Դրանց մեջ պատկերավորությունն առաջանում է դարձվածքը կազմող առանձին բառերը(բաղադրիչները) փոխաբերական իմաստով գործածվելու հետևանքով: Օրինակ՝ գլխին տալ-զոջալ, գլխին նստել-մեկին իրեն ենթարկել, վիզը ծռել-ստորանալ մեկի առաջ: Այս կարգի շատ դարձվածքներ, որպես սովորական բառակապակցություններ, ունեն իրենց զուգահեռ ձևերը, որոնցում բառերը հանդես են գալիս իրենց ուղղակի, անվանական իմաստներով, և կապակցությունն էլ զուրկ է, բնականաբար, վերաիմաստավորումից կամ փոխաբերական իմաստից, ինչպես, օրինակ՝ գլխինտալ- գլխին զարկել՝ հարվածել, վիզը ծռել-վիզը շարժել աջուձախ, գլխին նստել-գլխի վրա նստել:

Բաղադրիչների իմաստային անբաժանելիության աստիճանով դարձվածքային միասնություն պետք է համարել բառակապակցական որոշ տերմիններ, որոնց բաղադրիչ բառերը, ինչպես և ամբողջական դարձվածքները փոխաբերական իմաստ են ստացել, օրինակ՝ լացող ուռի, սպիտակ ածուխ:

Դարձվածքային կապակցություն: Իդիոմներից տարբերվում են դարձվածքային

կապակցությունները և դարձվածքային արտահայտությունները, որոնք իմաստային տեսակետից անբաժան բառերի համանշանկներ չեն, այլ իմաստաբանորեն տարրալուծվող դարձվածքներ, որոնց դարձվածքային ընդհանուր իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստներից:

Դարձվածքային կապակցություններ են կոչվում դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ բառերի իմաստներից: Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես էլ դարձվածաբանորեն գործածություն: Այդ կարգի դարձվածքներում բաղադրիչները դարձվածքը կազմող բառերը, հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով, այնուամենայնիվ, մնում են կախյալ վիճակում, բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Օրինակ՝ գլուխը կախել, հոնքերը կիտել, քիթը ջարդել:

Սրանց առանձնահատկությունն այն է, որ ունեն իրենց զուգահեռ ազատ կապակցությունները, դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչները կարող են փոխարինվել հոմանիշ բառերով, ինչպես, օրինակ՝ քիթը ջարդել և քիթը տրորել: **Դարձվածքային արտահայտություն:** Դարձվածքային արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, դարձվածքի ընդհանուր իմաստը ամբողջապես կախված է և բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից, դարձվածքի առանձնահատկությունն այն է, որ ունեն իրենց զուգահեռ ազատ կապակցությունները, դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչները կարող են փոխարինվել հոմանիշ բառերով, ինչպես, օրինակ՝ քիթը ջարդել և քիթը տրորել: **Դարձվածքայինարտահայտություն:** Դարձվածքային արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, դարձվածքի ընդհանուր իմաստը ամբողջապես կախված է և բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից, դարձվածքի բառային կազմը և դարձվածքային իմաստը կայուն են:

Այս կարգի դարձվածային շարքին են դասվում.

1. Գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, ինչպես նաև հեղինակային դիպուկ արտահայտությունները, զանազան ասույթները, որոնք թևավոր խոսք են դարձել և խզել են իրենց կապը նախնական բնագրից, նրանց առաջացման առիթ հանդիսացող կոնկրետ անձի կամ երևույթների հետ և ձեռք բերելով ընդհանրացնող իմաստ՝ լայն տարածում են գտել. ինչպես, օրինակ՝ ավգյան ախոռ, դամոկլյան սուր, կարապի երգ, ձայն բարբառո հանապատի:

2. Ժողովրդական խոսակցական անեծքները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ մի բարձի ծերանաք, գետինը մտնես, հողը դնեմ:

3. 3.Առածա-ասացվածքային արտահայտությունները, որոնք վեր են ածվել դարձվածքների, ինչպես՝ երկաթ ըտաք-տաք ծեծել, ճտերն աշնանը հաշվել և այլն:

Դարձվածքային արտահայտությունները, սովորաբար բաժանվում են երկուխմբի.

1. Անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններ: Անվանական(նոմինատիվ) բնույթի դարձվածքային արտահայտություններ են համարվում բառերի այն կապակցությունները, որոնք բառային արժեք ունեն, բառերի նման լեզվում անվանական դեր են կատարում և տրամաբանորեն համապատասխանում են հասկացությանը:

2. Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ:

Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ են համարվում նախադասությունների համարժեք այն կապակցությունները, դարձվածքային արտահայտությունները, որոնք տրամաբանորեն համազոր են դատողությանը: Սրանք անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններից հիմնականում տարբերվում են նրանով, որ ստորոգում արտահայտելով՝ նախադասություններ են, տրամաբանորեն՝դատողություններ, մինչդեռ անվանական բնույթի դարձվածքային արտահայտությունները բառերի կապակցություններ են, իմաստով համազոր են բառին:

Հաղորդակցական բնույթի դարձվածքները ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու խմբի.

ա) Առաջին խմբի մեջ մտնում են առածա-աֆորիզմային բնույթի

հաղորդակցական դարձվածաբանական միավորները՝ թևավոր խոսքեր, դիպուկ արտահայտություններ, առածներ, անեծքներ, մաղթանքներ, օրհնանքներ և այլն:

Երկրորդ խումբը կազմում են հաղորդակցական բնույթի այն դարձվածքային միավորները, որոնք իրենցից ներկայացնում են խոսակցական-Կենցաղային կաղապարներ. ինչպես, օրինակ՝ գրպանումս մկներ են խաղում:

Դարձվածքների ուսումնասիրման մեթոդական առանձնահատկությունները բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտեցինք, որ 1-6 –րդ դասարանների մայրենիի ծրագրում դարձվածքների ուսումնասիրման ուղղությամբ հատուկ աշխատանք նախատեսված չէ: Սակայն մայրենիի դասագրքերի բնագրերում աշակերտները բազմիցս հանդիպում են դարձվածքների, որոնց իմաստների բացահայտումը անհրաժեշտություն է: Դարձվածքների բացատրությունը պետք է անցկացնել ոչ միայն համապատասխան հոմանիշների օգնությամբ, այլև դարձվածքի շուրջ աշխատանքն ավարտել՝ դրանք գործածելով նախադասությունների և կապակցված խոսքի մեջ: Քանի որ դարձվածքները հարստացնում են խոսքը, ուժեղացնում են մտքի արտահայտչականությունն ու սրությունը, ասելիքը դարձնում են համոզիչ, ազդեցիկ, անհրաժեշտ է հետամուտ լինել, որ երեխաները դարձվածքները գործածեն ոչ միայն կարդացած բնագրերը վերարտադրելիս, այլև ինքնուրույն կառուցած խոսքում:

Դարձվածքներ առկա են մայրենիի դասագրքերում զետեղված գրեթե բոլոր ստեղծագործությունների մեջ: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է դրանց ուսումնասիրման ուղղությամբ աշխատանք կազմակերպել:

Այդ նպատակով ուսումնասիրեցինք և առանձնացրինք <<Մայրենի2>>[7], <<Մայրենի3>>[8], <<Մայրենի4>>[9], <<Մայրենի5>>[10], <<Մայրենի 6>>[11] դասագրքերում

---

[7] Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Գրիգորյան Ս., Մայրենի 2, հանրակրթական դպրոցի2-րդ դասարանիդասագիրք,Եր.,ՄԱՆՄԱՐ, 2016,1-159էջ:

[8] Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, հանրակրթական դպրոցի3-րդ դասարանիդասագիրք,Եր.,ՄԱՆՄԱՐ, 2015, 1-161էջ:

[9]Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, հանրակրթական դպրոցի4-րդ դասարանիդասագիրք,Եր.,ՄԱՆՄԱՐ, 2012,1-175էջ:

զետեղված ստեղծագործություններում գործածված դարձվածքները: Արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ հայ հեղինակների ստեղծագործություններում դրանք շատ են և ունեն բազմիմաստ արժեքներ: Ընդ որում, դա միայն պայմանավորված չէ թեմաների քանակով: Հայ հեղինակներ իստեղծագործություններում դարձվածքների միջոցով ներկայացվում են հայ ժողովրդի կենցաղը, մտածելակերպը, սովորությունները, հոգեկերտվածքը, իսկ դարձվածքները հատուկ են ժողովրդական մտածողությանը: Պատահական չէ, որ դարձվածքների մեծ պաշար կա հատկապես Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում: Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններն իրենց մեջ խտացնում են հայ ժողովրդի աշխարհայացքը, հոգեկերտվածքը, սովորույթները:

Մենք դասալսումներ ենք կատարել տարրական դպրոցի տարբեր դասարաններում՝ պարզելու համար, թե դասվարներն ի՛նչ մեթոդներ և ի՛նչ հնարներեն կիրառում դարձվածքներն ուսումնասիրելու ուղղությամբ:

<<Դարձվածք>> եզրույթին աշակերտներն առաջին անգամ ծանոթանում են երկրորդ դասարանում, երբ ուսումնասիրում են <<Ժողովուրդն իմաստուն է>> թեմատիկ խումբը:

Այսպես, դասալսումներից մեկի ժամանակ դասվարը բացատրեց, թե ինչ է դարձվածքը, և տրված դարձվածքն ի՛նչ է նշանակում: Դժբախտաբար, հարցը քննարկելիս՝ չնշվեցին ուրիշ օրինակներ, և չթվարկվեցին այլ դարձվածքներ: Ավելի շատ երեխաներն ուշադրություն դարձրին առած-ասացվածքներին:

Մեկ այլ դասալսման ժամանակ՝ <<Երեք աղջիկների հեքիաթը>> դասին, աշակերտները հանդիպեցին բերանը ջուր առնել դարձվածքին:

Դասվարը սկզբում կատարեց հարցադրումներ, որոնց օգնությամբ աշակերտները վերհիշեցին, թե ինչ է դարձվածքը: Այնուհետև բացատրվեց տվյալ դարձվածքի նշանակությունը և կիրառվեց մի շատ հետաքրքիր հնար: Նա պահանջեց, որ աշակերտները ջուր խմեն, սակայն կուլ չտան: Այնուհետև ասաց, որ փորձեն խոսել: Բնականաբար, աշակերտները չկարողացան. այսինքն՝ բերանը

[10]Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 5, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Եր., Էդիթ Պրինտ, 2019, 1- 110 էջ:

[11]Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Եր., Էդիթ Պրինտ, 2019, 1- 106 էջ:

ջուր առնել-լռել, չխոսել: Կարծում ենք, որ նման հնարներ կիրառելով, աշակերտները լիովին կհասկանան, թե ինչ նշանակություն ունի այդ դարձվածքը, և կկարողանան գործածել խոսքի մեջ:

Երկրորդ դասարանում <<Ժողովուրդն իմաստուն է>> թեմատիկ խմբի ամփոփման դասի ժամանակ կիրառվեց մի պարզ խաղ: Դասվարը պատրաստել էր ծաղկի միջուկներ, որոնց վրա գրված էր դարձվածք, առած, ասացվածք, խնդուկ և այլն: Ծաղկի թերթիկների վրա յուրաքանչյուր լեզվական միավորի համար գրված էին տիպիկ օրինակներ: Աշակերտները հերթականությամբ մոտենում էին գրատախտակին, վերցնում էին որևէ թերթիկ, ընթերցում էին և ամրացնում համապատասխան միջուկին: Եթե դարձվածք էր կամ առած, բացատրում էին նաև իմաստը: Այս խաղը, և մեթոդական մյուս հնարները նպաստեցին դարձվածքների իմաստների ամրապնդմանը:

Նշված նպատակով երրորդ և չորրորդ դասարաններում ևս մենք կատարել ենք դասալսումներ: Ցավոք, այս դասարաններում որևէ յուրահատուկ մեթոդական հնար չի կիրառվել, միայն դասի միջից դուրս են գրել դարձվածքները, առանձնահատուկ նշել են, որ տրվածը դարձվածք է, բացատրել են իմաստը: Մի քանի դասերի ընթացքում մենք համոզվեցինք, որ աշակերտները ընդհանրապես մոռացան լեզվական այս միավորի մասին: Կատարելով դասալսումներ երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում՝

Մենք փորձել ենք մշակել դարձվածքների ուսումնասիրման մեթոդական քայլաշար: Ներկայացնենք այդ քայլաշարը:

Ուսուցման սկզբնական փուլում ուսուցիչը ներկայացնում է որևէ փոքրիկ պատմություն (երկու կամ երեք նախադասությունից կազմված), որում գործածված է դարձվածք: Ներկայացնենք այս իրադրության հնարը պատմության տեսքով.

-Լռի՛ր Արմեն, -ասաց մայրիկը,-լեզուդ կծի՛ր:

Արմենը լեզուն կծեց և սկսեց լաց լինել:

Ուսուցիչն ուղղում է հետևյալ հարցերը.

-Ի՞նչ պատահեց Արմենի հետ (Արմենը լեզուն կծեց):

-Ի՞նչ էր ուզում ասել մայրիկը, երբ Արմենին նման խորհուրդ տվեց (մայրիկը խնդրեց տղային լռել):

-<<Լեզուդ կծի՛ր>> արտահայտությունը Արմենը ինչպե՞ս հասկացավ (Արմենը հասկացավ ուղիղ իմաստով):

Այս հարցերից հետո աշակերտներն ամփոփում են. <<Մայրիկը տվյալ արտահայտությունը կիրառեց փոխաբերական իմաստով և <<լեզուն կծել>> նշանակում է՝ լռել>>:

Այնուհետև ուսուցիչն առաջադրում է հետևյալ հարցերը.

-Կարելի՞ է այս արտահայտության մեջ լեզու բառը փոխարինել ուրիշ բառով (ո՛չ):

-Ինչու՞ (որովհետև կփոխվի արտահայտության իմաստը):

Այսքանից հետո ուսուցիչը բացատրում է՝ երբ մեզ պետք է ավելի ճշգրիտ և հուզական արտահայտել մեր վերաբերմունքը կատարվածի հանդեպ, մենք օգտագործում ենք բառերի հատուկ համադրություն: Այդպիսի բառերի համադրությունը անվանում են դարձվածք: Այսպիսով՝ երեխաներն ուսուցչի օգնությամբ ամփոփում են. Դարձվածք է կոչվում երկու կամ ավելի բառերի համադրությունը, որն ունի փոխաբերական իմաստ:

Դարձվածքները գործածվում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում:

Դարձվածքները խոսքը դարձնում են ավելի տպավորիչ և արտահայտիչ:

Այնուհետև պետք է մարզողական և կիրառական տարբեր վարժություններ կատարել ձեռքբերած գիտելիքներն ամրապնդելու համար(տե՛սվարժություն1,2,3,4,5,6,7,8):

Վարժություն1

Կարդա՛տրված նախադասությունները և ցու՛յց տուր դարձվածքները: Բացատրի՛ր դրանց իմաստը:

ա) Այս տարի մեր բախտը բերում է. առատ բերք ենք ունենալու: բ)Նա աշխարհ տեսած մարդ է, բանիմաց ու համեստ:

գ)Անին ճարպիկ աղջիկ է ամեն ինչից գլուխ է հանում:

դ)Գեղեցկուհուն տեսավ թե չէ, հիացմունքից քար կտրեց:

Գուշակի՛ր, թե որ կենդանու մասին է խոսվում դարձվածքում և բացատրի՛ր իմաստը:

...սիրտ ունենալ

...փետուրներով զարդարվել

թրջած...

...արցունքներ թափել

Վարժություն4

Գուշակի՛ր դարձվածքը՝ ըստ նկարի:



Վարժություն5

Կարդա՛ նախադասությունը և ընդգծված բառերը փոխարինի՛ր դարձվածքներով:

ա)Երբ պապիկը գնաց, Արմենը <u>տխրեց</u>:

բ)Տեսնելով իր անունը ցուցակների մեջ՝ <u>ապշեց</u>:

գ)Նա սովորություն ունի ամեն առավոտ <u>թեթևակի կարդալ</u> հայկական թերթերը:

դ)Պատանիները մի քիչ <u>գնում են</u>, հասնում են կարկաչուն մի գետակի:

Դարձվածքներ. Բերանը բաց մնալ, ճանապարհ կտրել, քիթը կախել, աչքի անցկացնել:

Վարժություն6

Գուշակի՛ր՝ ինչի մասին է խոսքը:

1. Այն փակ են պահում, երբ չեն ցանկանում ավելորդ բան ասել:

2. Այդտեղից կայծերեն թռչում, երբ ուժեղ հարված են ստանում:

3. Դրանց վրա են նստում, երբ շատ անհանգիստ են լինում:

4. Այն հավաքում են բերանում, երբ լռում են:

Վարժություն7

Գրական ո՞ր ստեղծագործություններից են առաջացել հետևյալ դարձվածքները. բացատրի՛ր դրանց իմաստները:

ա)անբան Հուռի, բ)քաջՆազար, գ)ձախորդ Փանոս, դ)շուն ու կատու դառնալ:

Վարժություն8

Գտի՛ր ավելորդ դարձվածքը (երկուսը իմաստով մոտեն, երրորդը՝ ավելորդ):

ա)Լեղին ջուր կտրել	ա) կյանքի թելը կտրվել
բ)սիրտը ահ ընկնել	բ)լույս աշխարհ գալ
գ)սիրտ անել	գ)հոգին ավանդել

Հետագա դասերին աշակերտները իրենց հյուսած պատմություններում, ինչպես նաև կարդացած ստեղծագործության բովանդակությունը վերարտադրելիս, ոչ միայն ճիշտ և տեղին էին գործածում դարձվածքները, այլև դրանք դիպուկ գործածում էին փոքրածավալ խոսք կառուցելիս:

Հայտնի է, որ անձի մտածողության զարգացումը ենթադրում է նրա կարևորագույն հոգեկան գործընթացների (վերլուծություն, համադրություն և այլն)ձևավորում և կատարելագործում: Հանձն առնենք մեր ավարտական աշխատանքի հիմնախնդիրը հանդիսացող վերլուծահամադրական մտածողության վրա: Վերլուծությունը առարկայի, երևույթի, իրավիճակի մտավոր մասնատումն է բաղադրիչ տարրերը առանձնացնելու համար: Համադրությունը՝ վերլուծության հակառակ գործընթացն է, որի օգնությամբ վերականգնվում է ամբողջությունը այս կամ այլ բաղադրիչներից: Վերլուծությունը և համադրությունը մեկ մտավոր գործընթացի կողմերն են: Այս երկու գործողությունների համակարգված աշխատանքի դեպքում զարգանում է վերլուծական-համադրական մտածողությունը: Վերլուծական-համադրական մտածողությունն անհրաժեշտ է մայրենի լեզվի ամբողջ ընթացքի ուսումնասիրության ժամանակ տարրական դպրոցում: Այսպես, վերլուծությունը տեղ ունի բառի մեջ հնչյունները առանձնացնելու, բառերի կազմության, նախադասության միջի բառակապակցությունների վերլուծության ժամանակ: Հնչյունների միացումը բառի մեջ, բառերինը՝ նախադասությունների, նախադասություններինը՝ պատմության և այլն, իրականացվում է համադրության գործընթացի միջոցով:

Այսպիսով՝ուսումնասիրեցինք <<Մայրենի2>> դասագրքում զետեղված բոլոր 83 նյութերը և հանգեցինք այն եզրակացության, որ դրանցից 44-ի մեջ հեղինակները գործածել են դարձվածքներ: Ներկայացնենք դրանք տոկոսային հարաբերությամբ.



Շարունակելով վերլուծությունը՝ մենք բացահայտեցինք, որ արձակ ստեղծագործություններում դարձվածքներն ավելի շատ են, քան չափածո ստեղծագործություններում: Նշենք, որ դասագրքում զետեղված չափածո ստեղծագործությունների քանակն ավելի քիչ է. 44 ստեղծագործություններից 30-ը արձակ են: Ստորև ներկայացնենք այդ ստեղծագործությունները՝ տոկոսային հարաբերությամբ.

Քննարկելով <<Մայրենի3>> դասագրքում զետեղված բոլոր 62 նյութերը՝ հանգեցինք այն եզրակացության, որ դրանցից 46-ի մեջ հեղինակները գործածել են դարձվածքներ: Ներկայացնենք դրանք տոկոսային հարաբերությամբ.



Մերաշխատանքի հիմնախնդրի շրջանակում դիտարկեցինք նաև <<Մայրենի 4>>

դասագրքում զետեղված բոլոր 51 ստեղծագործությունները և հանգեցինք այն եզրակացության, որ դրանցից 39-ի մեջ հեղինակները գործածել են բազմաթիվ դարձվածքներ: Ներկայացնենք դրանք տոկոսային հարաբերությամբ:



Շարունակելով վերլուծությունը՝ մենք Քննարկելով <<Մայրենի5>> դասագրքում զետեղված բոլոր 67 նյութերը՝ հանգեցինք այն եզրակացության, որ դրանցից 49-ի մեջ հեղինակները գործածել են դարձվածքներ: Ներկայացնենք դրանք տոկոսային հարաբերությամբ.



Հետազոտության վերջում ուսումնասիրեցինք <<Մայրենի6>>դասագրքումզետեղվածբոլոր94նյութերը և հանգեցինք այն

եզրակացության, որ դրանցից 64-ի մեջ հեղինակներըգործածելենդարձվածքներ:Ներկայացնենքդրանքտոկոսայինհարաբերությամբ.



Այսպիսով՝ 1-6 դասարանների <<Մայրենի>>-ի դասագրքերն ուսումնասիրելիս բացահայտեցինք, որ դրանցում զետեղված ստեղծագործություններում առկա են բազմաթիվ դարձվածքներ, որոնց բովանդակությունն ու խորհուրդը մեծապես պայմանավորված են կարդացած նյութի գաղափարով, ենթատեքստով, հետևաբար դրանց իմաստների քննարկումը կնպաստի կարդացածի ընկալմանը, գաղափարի բացահայտմանն ու

մտապահմանը: Այսինքն՝մայրենիի դասերի <<բառային աշխատանք>> բաղադրիչի իրականացման ընթացքում պիտի քննարկել նաև ստեղծագործությունների մեջ գործածված դարձվածքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեև լեզվաբանական գրականության մեջ քննարկվում են դարձվածքների առանձնահատկությունները, սակայն մեթոդական գրականության մեջ ըստ ամենայնի չի ներկայացվում, թե ինչպես կարելի է ուսումնասիրել դրանք մայրենիի դասերին բնագրի շուրջ աշխատելիս;

Դարձվածքների ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունն առանձնապես ակնառու է, երբ դրան ուսումնասիրվում են կարդացած բնագրի շուրջ վերլուծական աշխատանք կատարելիս և շարունակվում են տարաբնույթ առաջադրանքի կատարման ընթացքում:

Թեև մայրենիի դասագրքերում առկա են դարձվածքներին վերաբերող առաջաջադրանքներ, սակայն դրանք առավելապես վերաբերում են դրանց մտապահմանը, բայց ոչ ընկալմանն ու կապակցված խոսքում կիրառմանը:

Մայրենիի դասագրքերում տեղ տալ դարձվածքների ուսումնասիրմանը: Այն ստեղծագործություններում, որտեղ գործածված են շատ դարձվածքներ, դասանյութի վերջում դրանց շուրջ դնել հարցեր կամ վարժություններ: Ծրագրում նույնպես նախատեսել դարձվածքների ուսումնասիրում:

Դարձվածքների ուսումնասիրման գործընթացում շահեկան էկիրառել փոխներգործուն մեթոդներ և բանավոր ու գրավոր փոքրածավալ խոսքում դարձվածքների կիրառմանը միտված առաջադրանքներ, խաղ-վարժություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից գրական հայերեն,Եր.,ՀՍՍՀԳԱՀ.,1981, 418էջ:
2. Բեդիրյան Պ. Ս., Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության, Եր., Ասողիկ, 2007, 128 էջ:
3. Բեդիրյան Պ.Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր.,ԵՊՀ հրատարակչություն, 2011, 1399էջ:
4. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր.,Զանգակ,2018,339էջ:
5. Զաքարյան Հ.,Ավետիսյան Յու., Բառագիտություն, Եր., Զանգակ, 2016,272 էջ:
6. Նազարյան Ռ.Ք.,Մայրենին բոլորի համար, ուսումնական ձեռնարկ հայոց լեզվի, Եր., 2019, 461 էջ:
7. Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ., Հոմանիշների, հականիշների, դարձվածքների դպրոցական բառագիրք, Եր., ՎՄՎ պրինտ,2002, 336 էջ:
8. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., ԳրիգորյանՍ., Մայրենի2, հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, Եր., ՄԱՆՄԱՐ, 2016, 159էջ:
9. Սարգսյան Վ.,Թորոսյան Կ.,Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի3, հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Եր.,ՄԱՆՄԱՐ, 2015, 161էջ:
10. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի4, հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք, Եր., ՄԱՆՄԱՐ,2012,175էջ:
11. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 5, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Եր., Էդիթ Պրինտ, 2019, 1-110 էջ:
12. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Եր., Էդիթ Պրինտ, 2019, 1-106 էջ:
13. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004, 352 էջ:
14. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր.,Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975,614 էջ:
15. ՀՀ կրթական չափորոշիչներ, Եր.,Անտարես,2011:
16. https://learningapps.org/